

24 226

24 227

24 228

24 229

24 230

24 231

3 Կոնյա քաղ. Գ.

Ո՞վ է Ըս

Քիֆիս 1909

891-99

U-66

891-99

U-66

un

Ե. ՍՕԼՈՎԵԱՆ

8

== ՌՎԵՆԱ ==

Պատմաճր անցածից



(Արտատպած «Տարազից»)

8794 un.

ԹԻՖԼԻՍ

Տպարան «ԳՐՕԳՐԷՍ» Ընկ., Վեյկամիստոկ. 7.

1909

5012-56
5013-56
5014-56
5015-56
5016-56
5017-56

26200-Ա.Զ.
26201-Ա.Զ.
26202-Ա.Զ.
26203-Ա.Զ.
26204-Ա.Զ.
26205-Ա.Զ.

2003



ՈՎԷՆԱ

(Պատկերանկար)



Նոսանքների ու հովերի փոփոխությունները վրայ հասան շատ շուտով: Նա չէր ուզում հաւատալ, որ նախընթաց օրերի ազատագրական բռնկումներն այդպէս անսպասելի կերպով տեղի կըտան հին կարգերի գրոհներին:

Փողոցներում գեռ չէին դադարել աղմուկն ու շարժումը, բայց այդ փոթորկումներն այն չէին, ինչոր երկու օր առաջ:

Սև-հարիւրակային շարքերի թափօրները եկան փոխարինեցին յեղափոխական հոսանքներին: Այլևս չէին լսում մարտելօզը, վարչաւեանկան: Շրջաններում և ամեն տեղ պատում էին լուրեր, թէ պիտի ջարդեն, փշրեն, այրեն այն յեղափոխականների տները, որ երկու օր առաջ միտինգներում ճառեր էին ասել և ազատական օրերը ողջունել:

Գիշերը վրայ հասաւ շատ վատ գոյներով:

Այս գիշեր դեռ նա պատում էր փողոցներում և խիստ հետաքրքրում այն շարժումներով, որ տեղի էին ունենում քաղաքում: Նա մօտեցաւ քաղաքային պարտէզին, կամեցաւ տեսնել, թէ ի՞նչ է կատարում սրա մէջ: Նախընթաց օրն այստեղ նա խօսել է:

Իսկ հեռում դանդաղ իջնում էր երկար ու մոխրագոյն աղջամուղջը, խոնաւ շերտերով փռում տնեւի շուրջը, պատուհանների վրայ և սփռում տխրութիւն ու մռայլութիւն:

Մեր հերոսը կոճկեց վերարկուն: Աշնանային երեկոները դժւար չէր մըսել և ծանր կերպով տկարանալ: Նա զգուշօրէն փաթաթեց իր վերարկուի մէջ: Նրա միտքը կանգ առաւ մի խնդրի՝ վրայ՝ արդեօք գնա՞յ տուն, թէ մտնէ այդ խաւար խուժանի մէջ: Նա դանդաղեցրեց քայլերը: Ո՛չ, նորութիւն չէ նրա տեսածը: Դեռ երէկ նա նկատում էր, որ նոր հովերի միջից այդ խաւարը վրայ է կոխում: Ահա այդ ժամանակ պարզ նա տեսնում էր, որ երկու հոսանքներն անխուսափելիօրէն պիտի ընդհարւեն: Առողջ դատողութիւնը դրդեց նորերին լռութեան տալ խաւար գլորո՞ղ, — իսկ այդ հանգամանքը խրախուսեց սեւերին:

Արդեօք ո՞րը կըյաղթէ:

Եւ ինչոր անըմբռնելի, լռակեաց, խորհրդաւոր հարցեր պաշարեցին նրա գլուխը: Երբեմն այդ խնդիրները կորչում էին, անհետանում, բայց և յետոյ խկոյն նորից վերականգնում՝ արդէն նոր ելեէջներով, նոր գոյներով:

Եւ նրան թւում էր, որ հին հոսանքը վրայ է տալիս ոչ թէ պատահաբար, սովորական կերպով, այնպէս, ինչպէս ամեն մի լաւ երեւոյթ անխուսափելիօրէն իր հետ բերում է և հակադիրը, այլ գալիս է կանո-

նաւոր մտածածին՝ գրոհով, գալիս է, որ միանգամից կլանէ իրան թշնամի նոր հոսանքին:

Նա գնաց ուղիղ: Յետոյ սկսեց այլևս ականջ չը դնել իր ներքին ձայնին, որովհետեւ վախում էր այն յուսահատական յոռետես ելեէջներից, որոնք արձագանք էին տալիս նրա սրտում: Ամեն կերպ աշխատում էր վերարտադրել այն յոյզերը, որոնք դեռ մի օր առաջ ներշնչեցին այնքան յոյս և խրախուսանք:

Դիշերը սակայն չէր պարզւում: Մութն էր. ճրագի մի շող անգամ չէր երևում և ոչ մի պատուհանից:

Նա նորից զգաց իր սրտի խորքում մի ծանրութիւն անտանելի դրութիւնից: Նա սպասում էր շատ անակնկալների: Նրա մօտով շարունակ գնում-գալիս էին, յետ էին դառնում, խոր նայում էին անցուդարձ անողները: Լսւում էին երբեմն ձայներ, գոչիւններ, ապա լռում էր ամեն ինչ:

— Ո՞ւր էք գնում:

Նա յետ դարձաւ: Համազգեստով մի պարոն կանգնեցրեց նրան:

— Ո՞ւր էք գնում: Այստեղ, այգում խմբած են սև-հարիւրակները խիստ են զրգուած: Զեզ կըճանաչեն, կըսպանեն... Դուք միտինգում խօսեցել էք, ես յիշում եմ, թէ և ձեզ հետ ծանօթ չեմ և մանիֆեստի օրը առաջին անգամ եմ տեսել: Փոխեցէք ձեր ուղին, գնացէք այս փողոցով:

Նա յայտնեց իր շնորհակալութիւնը, շփեց իր ձակատը: Մի րոպէ մտածեց՝ արդեօք այդ սրտացաւ միջամտութիւնը դիտաւորեալ խօ չէ: Նա չի ճանաչում այդ աստիճանաւորին. հաւատալ այդ մարդուն: Աստիճանաւորների վերաբերմամբ նա կազմած ունի որոշ տեսակէտ: Ճիշտ է, նա գիտէ, որ սրանց մէջ ևս

կան ազատամիտներ, ժողովրդական բարեկեցութեան կողմնակիցներ, բայց և այնպէս փաստ է, որ սակաւ չեն և հակառակ մտածողներ: Չըճանաչած հաւատ ընծայեմ... Մի բոլէ տատանւեց: Չըզնալ արդեօք, վախենալ վտանգից: Նա որոշեց մտնել այդի, սակայն ամբողջ այդ միջոցին անկազմակերպ շարքերով հանդարտ ուղևորւեց հակառակ դռնից դէպի միւս փողոցը: Նա թողեց այդին և գնաց ուրիշ ճանապարհով: — Չեն հանգստանում, — մըմնջացին նրա շրթունքները:

Երկրորդ, երրորդ փողոցները նոյն պատկերն էր ներկայացնում:

Խմբեր, գոչիւններ, յիշոցներ...

Աղմկալից երեկոյ: Ամեն տեղ իշխում էր բիրտ ուժը, սև ոգին. իշխում էր իրան յատուկ առանձնա-յատկութեամբ, իրան վայել կոպտութեամբ:

Երեկոն սառնանում էր: Ամպերի շերտերը կուտակւում էին ներկելով ամբողջ հորիզոնը կապտագոյն գոլերով: Ծառերը տերևաթափ դեռ չէին եղած, բայց ընդունել էին մի տխուր տեսք: Աշնանային տերևների բուրմունքը տարածւում էր աւելի սուր կերպով:

Պարտիզի շրջակայքում, շուրջ ծառերի վրայ ագռաւները պտոյտ էին գործում և պատրաստւում գիշերելու: Նրանք շարունակ տեղափոխւում էին մէկ ծառից միւսը: Սրանց կռաւոցը լրացնում էր երեկոյի խորհրդաւորութիւնը, օրւայ տխուր տրամադրութիւնը: Բայց նա, կարծես, այդ չի նկատում: Նրա հոգին բուռն կերպով լցւած է օրւայ հովերի ելեէջներով:

— Որքան ծանր է տեսնել այս փոփոխութիւնը, այդ մոյգ, ոչինչ չըգուշակող փոփոխութիւնը:

Սրտի բոլոր թափով նա ուզում էր նախընթաց

օրւայ տրամադրութիւնը շարունակէր և այսօր, վաղը, լինէր յարատև:

Նա կտրեց դարձեալ մի կարգ փողոցներ տխուր, խոր մտածկոտ քայլերով: Անցաւ դարձեալ մի քանի փողոց, կանգնեց, յետ նայեց — և ոչ մի փոփոխութիւն: Այս անգամ լսեց նոյն իսկ ատրճանակի պայթոց:

Սկսեց:

Ահա մի քանի բոլէ միայն և կըսկսւի հրդեհ, թալան: Իսկ ի՞նչ պիտի նա անէ:

Նա շատ վաղուց է անցել բողոքողների շարքը: Այդ արաւ նա խիստ ծածուկ: Չըգիտէին նրա մօտ ազգականները, բարեկամները, քոյրերը և եղբայրները: Նրա բոլոր մերձաւորները սովորաբար չէին հաւատում ոչ մի առողջ մտքի յաղթանակին և պատահելով մէկ-մէկու ծաղրի ու ծանակի էին նրան արժանացնում: Ծիծաղում, ծաղրում և այդպիսով կարծես ուզում վիրաւորել նրա սուրբ զգացմունքները: Բայց նրա բռնկայոյց ոգին չի հաշտւում: Մի խոր, անհուն սիրով հաւատում, սպասում է, որ կըգայ օրը, և այդ բթացած յոռետես դէմքերը կըսողան նրա ոտքերի առաջ, նրանից խորհուրդ կըհարցնեն, չեն ծաղրիլ նրան:

Եւ այդպէս էր երէկ:

Անցել է միայն մի օր...

Մի չոր խեղդող հազ բռնկեց նրա կոկորդում և կտրեց նրա շունչը, կարծես կամենալով խեղդել նրան:

Նա մօտեցաւ իր տան դռնին:

Աղմուկ... Սովորական տնակիցների բարձր խօսակցութիւնն է՝ դժգոհ, փութկոտ խօսակցութիւն, չարախինդ դատողութիւններ: Լսեց մի ինչոր պատւէր, բիրտ քայլերը շտապեցին կատարել այս պատւէրը: Դժգոհութիւնը, գոչերը սաստկանում են:

—Դուռը փակիր. ամուր փակիր,—կարգադրեց տանտէրը:

Խիստ վիրաւորւած նա մտնում է բակը: Գլխի մէջ ամեն ինչ խառնւել է ու շփոթւել: Այժմ նրա գլխում զուգահեռաբար ցցւեցան բակի դժգոհութեան շարժառիթները: Այդ յանդիմանութիւններն ուղղում էին նրա հասցէին: Անսպասելի չեն այդ յարձակումները: Մութ, խաւար տգիտութիւնը նրան շատ է խրատել—այժմ էլ նոյն հետեանքները:

—Փակեցէք դուռը. միշտ բաց էք թողնում: Մենք բոլորս պիտի տուժենք... Այս գիշեր պիտի հրդեհեն մեր տունը ձեր պատճառով: Նա աշխատեց զսպել իրան, չըպատասխանել, կարգ գցել իր մտքերի մէջ, աշխատում էր այնպէս անել, որ ուղեղը գերակշռի, բայց չէր լինում:

—Խնդրում եմ տունս դարդակէք... և որքան կարելի է շուտ...

Բայց այսքան կարողացաւ անել, որ տանտիրոջ յանդիմանութիւններին չըպատասխանեց փոխադարձ վերաբերմունքով և ներս մտաւ առանց մի խօսքի:

—Այ էդպէս է միշտ,—շարունակում էր բարկանալ տանտէրը,—որքան ուզում ես ասա... Ո՛չ էի սըրան տուն տւել: Դուան փայտը գցեցի՞ր,—դարձաւ մօտեցող դռնապանին:

—Գցեցի, գցեցի, աղա:

Այդ ձայները հասնում էին նրա ականջին բաց օդահանից: Նա մօտեցաւ պատուհանին և ուժգին թափով փակեց օդահանը:

Երկար ժամանակ նա աշխատում էր դասաւորել իր մտքերը: Յանկարծ նա ենթարկւեց կոյր բնազդին,

այն բնազդին, երբ մարդ զգում է իրան խոր վիրաւորւած:

Ո՞վ է նա, ինչի՞ արդիւնք է... Իր նման մտածողները կարող են տանել բիրտ ուժը, թէ կըկորչի մէկը, կըբանտարկւի երկրորդը, կըջարդւի երրորդը... և անտարբեր, սառն ու խաւար ոգիները կըծաղրեն նրան, նրա տենչերը կըհամարեն ցնորական...

Ձեռքի արագ շարժումով բացեց իր փողկապը, դէն շալտեց պիջակը: Նա զգաց, կարծես, իր թուլութիւնը, մօտեցաւ թաղտին: Յուսահատեցուցիչ տպաւորութիւնները ճնշել էին նրա ուղեղը, և նա չըկարողացաւ թօթափել իրան հոգեկան ծանր յոյզերից: Նա ընկաւ թաղտի վրայ. նրա ամբողջ էութեան մէջ նկատւում էին հաւատը կորցրած մարդու բոլոր նշոյլները:



Հասաւ միւս օրը:

Այնտեղ, քաղաքի հեռաւոր մասերում աստիճանաբար մարում են առկայծող լոյսի շողերը՝ աղատագրական շարժումների բռնկայոյզ փոթորիկները:

Վրայ է կոխում մռայլը՝ տխուր կեանքի բիրտ ուժի թափը:

Մեծամեծ խմբերը, ժողովրդական ամբոխը գործում է իր շարժումը: Լսւում են երգեր, օրհներգներ... Մօտենում են գլխաւոր փողոցներին: Տեղ-տեղ խուսափում են դրանցից: Թափօրը ստաւարանում է:

Նա դուրս եկաւ փողոց: Նրան հետաքրքրում էր այդ բնորոշ, ինքնաբոյս շարժումը:

Հեռւից մի շքեղ կառք գալիս է նրա առաջ:

Կառքը կանգնեց:

Մի դժգոյն դիմագծերով, միջին հասակով մարդ

դուրս եկաւ կառքից: Հագուստը շքեղ էր. փոքրիկ մի-
րուքը արդէն սպիտակած: Սա իջաւ, նայեց չորս կող-
մը: Կեղծ շինծու ժպիտը սահեցաւ նրա երեսով:

— Լսում էք, նրանք գալիս են...

Բարե ձեզ, Մրտոյեան, — ասաց կառքից իջնողը:
Գալիս են... Մենք բոլորս փակեցինք խանութներս.
Կարող են յարձակւել...

Մրտոյեանը շփոթւեց մի բոպէ. չըկարողացաւ մի
խօսք ասել: Մօտեցողը քաղաքի յայտնի հարուստնե-
րից էր, որի խանութում ծառայելիս է եղել մի ժա-
մանակ Մրտոյեանը: Երբէք այդպէս չի խօսեցել այդ
հարուստը իրան ստորագրեալ համարւածների հետ:

Մրտոյեանը կամեցաւ կտրել իր նախկին տիրոջ
խօսքը: Ներքին մի խոր յուզմունք խեղդում էր նրան:

Այդ բարձունքի տէր հարուստը մօտենում է
նրան, ժպտալից է խօսում:

Հարուստի աչքում Մրտոյեանը մի ըմբոստ ոգի
էր, որին, նրա կարծիքով, հարկ էր զսպել, զրկել,
խեղդել: Իսկ այժմ ո՞ր բարի կամքն է մօտեցրել սը-
րան, — մտածում էր Մրտոյեանը:

— Լսում էք, — շարունակեց հարուստը, — նրանք
հաղար — հազարաց են, իսկ դձուք... Ինչո՞ւ էք խօսեցել
միտինգում: Մենք հայերս պիտի հեռու լինենք: Մեր
լի՞նչ գործն է դրանց շարժումների մէջ խառնւել: Կը
գան, կը ջարդեն, լաւ կը լինի: Դուք, իհարկէ, ոչինչ
չունէք, ոչինչ չէք կորցնում, իսկ մենք գոյքի և կա-
րողութեան տէր ենք, ի՞նչ մեղք ունենք:

Մրտոյեանը յուզւեց, նրա ոտքերը դողդողացին,
իսկ շնչառութիւնը կարճացաւ: Երկար ժամանակ նա
զսպեց իրան: Մինչդեռ մեծատան խօսքերը մի տեսակ

թոյն էին ածում նրա սրտի մէջ և հեգնում նրա տե-
սակէտները:

— Մենք էլ մեղք ենք:

Մրտոյեանը մի ինչոր բան մըմնջաց. աղան ձեռ-
քով արհամարական շարժում արաւ, միայն:

— Դուք ասում էք մենք ոչինչ չունենք:

— Դուք ոչինչ չէք կորցնում:

— Ոչինչ չէք կորցնում, ոչի՞նչ:

— Կարծում եմ:

Աղան թօթւեց ուսերը:

— Իսկ եթէ մենք...

Մրտոյեանը խոժողացրեց աչքերը և մի ոչնչա-
ցնող հայեացք գցեց հարստի երեսին:

— Իսկ եթէ մենք շատ աւելին ենք կորցնում:

Հարուստը չըշփոթւեց:

— Ներեցէք, դուք ինձ չըհասկացաք:

— Չըհասկացայ. իսկ եթէ ասեմ, որ շատ լաւ
հասկացայ:

— Ուրեմն: Այդ բոլորից յետոյ դուք մնում էք
հաստատ ձեր համոզմունքի մէջ, զարմանալի է...

Դուք չէք լսել — դեռ ևս գաղտնիք են պահում
շրջաններում...

Մեզ հայերիս մեծ վտանգ է սպառնում — կարծեմ
դուք չէք ցանկանայ, սր հայերը տուժեն... Այնպէս չէ:

Մրտոյեանը լռում էր. երբեմն-երբեմն նա շփում
էր իր ճակատը...

— Զէ, դուք խելօք մարդ էք, լաւ մտածեցէք,
ի՞նչ անենք: Եթէ ուժը ձեր կողմը լինէր...

Մրտոյեանն աւելի յուզւեց:

— Եւ հէնց այդ էիք ուզում ինձ ասել:

— Միթէ սա պատիկ խնդիր է: Ներեցէք... ես և

ինձ հետ դարձեալ մի քանիսը ուղում էինք գալ ձեր տուն, խնդրել... Մեզ, հայերիս, չի վայելիր... Թողէք ուսանելը իրանք-իրանց գլխի ճարը տեսնեն...

— Իսկ երբ յաղթե՞ն, կուզէ՞ք սրանց յաղթութեան արգասիքը վայելել, չէ՞:

— Տեսնում էք, դուք դարձեալ ձերն էք ասում: Եղբայր, հասկացէ՞ք, որ մենք հայերս քիչ ենք: Սա միայն իմ խօսքերը չեն: Անցեալ օրը մենք մի փոքրիկ ժողով ունեցանք, բոլորը պատուաւոր մարդիկ էին, բոլորն էլ նոյնն էին ասում, որ դուք աւելորդ էք մտել դրանց շրջանը:

Տեսէ՞ք այն օրը ռվբեր են եղել խօսողները՝ մեծ մասը հայերը և հրէաները...

Մրտոյեանը խիստ վիրաւորեց:

Նա մի քայլ արաւ, կամեցաւ հեռանալ, բայց իսկոյն փոխեց մտադրութիւնը և պատրաստեցաւ յանդիմանելու:

Հեռւից օրհներգի ձայնը երկար և ուժեղ թափով վրայ հասաւ, կտրեց նրանց խօսքը, յետոյ հանդարտեց: Ըստ երևոյթին, ամբոխը ուղևորւում էր մի ուրիշ փողոց:

Մրտոյեանը խիստ յուզւեց, նայեց այն կողմը, որտեղից լսում էր երգը: Բարկութիւնը մի րոպէ իջաւ, իսկ երեսի վրայ երևացին վշտի խոր ահօսներ: Նորից գոչիւններ, հուռայի ձայներ, սուր, ահանջ ծակող ձայներ՝ հազարաւոր տենչերի, շինծու յոյզերի, սպառնացող աղաղակներ...

— Լսում էք. այդ բոլորից յետոյ հաւատում էք ձեր շրջաններին: Հէնց ձեր ասած շրջաններն էլ յետ ու առաջ կը գան, էլի մեզ, հայերիս, թշնամի կը համարեն: Կըխարէք, զգոյշ կացէք: Սրանք բոլորը իրանց

համար են մտածում: Մի խարւէք նոր հովերից, քանի թոյլ են սրանք, կարօտ են մեզ, պտոյտներ են գործում օտար տարրի գլխին, իսկ յաղթեցին, թէ չէ՝ մեզ այնպէս կըսղմեն, որ քէֆներդ գայ: Դժուար է ուրիշ բան սպասել դրանցից. ես էլ լինէի, այլ կերպ չէի վարւիլ: Ամեն ազգ իր շահերն ունի, պիտի իր գլխի ճարը տեսնէ: Իսկ հայի շահը պահանջում է չըխառնել: Մեր զգուշութիւնից է կախած մեր գոյութիւնը: Երկու օր առաջ ձեր գոված բանւորները յոխորտացին... Ի՞նչ դուրս եկաւ. ինչո՞ւ են հիմա մկան ծակը մտել: Դուք այնպիսի կարգեր էք պահանջում, որ չըգիտեմ ինչ ասեմ... Ասացէ՞ք խնդրեմ, իրտեղ կան այդ կարգերը. Ամերիկայում կան, Անգլիայում կան... Անկեղծ լինենք. դուք մեզ բուրժուա էք անանում, բայց մի մոռացէ՞ք, որ բուրժուան էլ մարդ է, նա կարծում էք Աստուած չունէ, պազան է: Ամենից առաջ մենք հայ ենք, եղբայրներ ենք: Ինձ համար հայ աղքատը, անբախտը, բանւորը նոյնն է, ինչոր հարուստը, նրա ցաւերն իմ սրտին մօտ են, որովհետեւ ամենից առաջ նա հայ է... Հաշտեցէ՞ք այդ մտքի հետ...

Մրտոյեանը հազիւ զսպեց իրան:

Նրա շնչառութիւնը արդէն արագացաւ: Յուզւած աչքերով դիտեց այդ հարուստին, պատրաստեցաւ իր կարծիքն էլ յայտնելու, վիճաբանութեան մէջ մտնելու, — բայց հարուստը կտրեց նրան:

— Լաւ մտածեցէ՞ք, որ մենք ամենից առաջ հայ ենք: Միթէ եւրոպացիներից էլ առաջ ընկած: Մտածեցէ՞ք...

Նա պարզեց իր ձեռքը, կամեցաւ սեղմել և մէկ անգամ ևս խնդրել:

Մրտոյեանի երեսն արդէն այլալիւ է: Ներքին

խիստ յուզմունքից նա մի շարժում գործեց և խիստ կերպով նայեց հարստին:

—Դուք կարծում էք, որ մենք հակառակ ենք,— բայց, եղբայր, հաւատացէք, որ մեր շահերը պահանջում են հեռու մնալ:

Բոլորն էլ այդ են ասում:

—Ովքեր:

—Պատուաւոր, խելքը գլխին մարդիկ:

Հարուստը հպարտութեամբ նայեց Մրտոյեանին, գլուխը վեր բարձրացրեց:

—Այդպէս, այդպէս, համոզւեցէք, շնորհակալ կը լինէք: Սպասիր, ձին շուռ տուր,—պատուիրեց հարուստը կառապանին:

Մի րոպէ նրանք նայեցին մէկ-մէկու: Հարուստը մեկնեց իր ձեռքը:

—Ցտեսութիւն...

—Ո՛չ, ո՛չ, խնդրեմ, հարկաւոր չէ այդ ձեռքը: Դուք ուզում էք այդ ձեռքով մեզ կաշառել: Ձեր ցուցմունքները մեզ հարկաւոր չեն: Այո՛, ես ոչինչ չունեմ, բայց ունիմ սիրտ, ձգտում գէպի գաղափարը, հաւատ գէպի ապագան...

Նա չըջարունակեց, քայլեց, գնաց առաջ:

Նա գնում էր. նրա ականջների մէջ իշխշում էին հեռաւոր աղմուկի ձայները: Խաւար տրամադրութիւնների գոչիւնները տարածւում էին ամեն կողմ և շուրջ սփռւում իրանց իշխանութիւնը:

—Այո՛, վրայ են տալիս...

Նայեց ետև. հարուստը նստեց կառքը և անհետացաւ: Մրտոյեանը հասկացաւ, թէ ինչո՞ւ է այդ հարուստը այդպէս խօսում, ինչո՞ւ է նա այդպէս կառչել նեղ ազգայնական շովինիզմին: Մրտոյեանը ուզում էր

բացականչել ընդհանուրի առաջ, թէ սխալ է հարստի տեսակէտը: Սակայն օրւայ տրամադրութիւնը այնպէս էր, որ հազիւ թէ նրան լսող լինէր... Նրա առաջնից սկսեցին փախչել մարդիկ, մտնել բակերը, իրանց տըները:

—Վախճում են... փախչում են...

Իսկ թափօրի սպառնական ձայները կրկնւում էին ու կրկնւում... Մէկ փողոցից անցնելով միւսը, նըրանք գոչում էին.

—Հուռւմ... Ո՞ւր էք, յոխորտացողներ...

Մրտոյեանը արդէն ոչինչ չէր լսում: Մի չարախինդ ժպիտ եկաւ պատեց նրա մռայլ երեսը:


Երբեմն-երբեմն նա ինչոր խուլ ձայներ էր արձակում... Այդ ժամանակ նրա քայլերը դանդաղում էին, ոտքերը թուլանում, իսկ կոր մէջքը աւելի ու աւելի էր ծալւում:

50/2-56



ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ՄԵՐ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

- 1) Կոտրւած սիրտ, վէպ 170 էրես. — 40 Լ.
- 2) Մեռած ծովում, » 390 » — 1 ր. —
- 3) Կեանքի պահանջը, մանկ. պատմւածք,
տպւած 1902 թ. «Աղբիւրի» №№ 9—
12-ում:
- 4) Հարազատ գծեր, պատկեր. — — 15 »
- 5) Ղօնադրուող մնաց, վօդըւիլ 1 արար.,
բ. տպագրութ. (սակաւաթիւ) — — 20 »
- 6) Խրամատի սուղ, վէպիկ, տպւած
1905 թ. «Բազմավէպի» № 1—2-ում:
- 7) Բանուրի գիրքը, տպ. 1907 թ. «Աղ-
բիւրի» № 5—6 գրքում:
- 8) Ո՞րն է իսկական ներկայացուցչու-
թիւնը, բ. տպ. (սպառւած) — — 2 »
- 9) Խոռվարկուններ, պատմ. 88 էրես — 25 »
- 10) Վարագոյրի ետեւում, մանկակ. պատկ.
տպ. 1908 թ. «Աղբիւրի» № 2—3-ում:
- 11) Ո՞վ է նա, պատմւածք — — 5 »



5012-56

15m

Kugelerf. 20. Juni.

24226
24227
24228
24229
24230
24231

201

